ԺԱ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՅՈՒՆԻՍԱՐ 1906—ՎԱՌՆԱ — ԹԻՒ 4

Լեր. Բերա Գ. Աղեքսարեան Միութեան Լեռնագոց № 4

ԳԻՆԸ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւը մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.
Վեցամսեայ. . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոլար
Վեցամսեայ 1. 50 »

ԿԱՆԽԻԿ

Ծանուցման տողը
20 սանթիմ

ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction de journal
„Iravounk"
VARNA (Bulgarie)

Редакция
на вѣстникъ
„Иравунк"
ВАРНА

Գրուրդուրիւնք առ չեն տրուիր

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Մշակի յունվար 1 թիւէն կարտատպենք այս յօդուածը որ ամփոփի կերպով Կովկասի և մասնաւորապէս Կովկասահայոց արդի արհաւրալից վիճակը կը պարզէ անկեղծօրէն և դարման մը կառաջարկէ։

Ժամանակ է այս վերջին տասն ամիսների արիւնոտ անցքերի վրա մի քննական ակնարկ գցելու եւ հանելու անհրաժեշտ եզրակացութիւնները։

Անշուշտ, միմիայն գործնական նպատակով։ միմիայն ապագայում մեր բռնելիք ընթացքը նախագծելու դիտաւորութեամբ, որովհետեւ տեսական իմաստասիրութեան ժամանակ չէ։ Թող դրանով զբաղվեն մեր յետնորդները, եթէ միայն մենք կը թողնենք յետնորդներ . . .

Վտանգի ահաւոր ժամին պէտք է ստածել միմիայն եղքի եւ միջոցների մասին եւ ժամավաճառ չը լինել ակադէմիական վէճերով։

—

Ո՞վ բռնկեցրեց հայ—թուրքական հրդեհը, ո՞վ սրեց թուրքին ու բաց թողեց հայի վրա։

Նոյն իսկ ինքն՝ Կովկասեան այժմեան փոխարքան, իր պատասխաններից մէկի մէջ՝ տուած հայ-պատգամաւորութիւններին՝ ստիպված էր խոստովանել գօլիցիեան ըէժիմի դատապարտելի ընթացքը հայերի վերաբերմամբ, մի ընթացք, որ հայի կեանքը ու գոյքը արտաքոյ օրէնքի էր հրատարակել։

Ամեն մի հայ, անշուշտ, խորապէս համոզված է, որ եթէ կառավարութիւնը ցանկանայ, անկեղծ, առանց յետին մտքերի, վերջ դնել թուրքերի յարձակումներին հայերի վրա—կարող է հասնել այդ նպատակին մի քանի օ՛րում . . . ոչ աւելի։ Օ՛ կառավարութիւնը հրաշալի կերպով գիտէ թուրքերին զսպելու միջոցները։ Նա այդ բանի մէջ 75 տարվայ հարուստ փորձ ունի եւ հազար անգամ մեղանից աւելի լաւ ուսումնասիրել է այն հնարները, որոնցմով, իբրեւ գիւթական գաւազանով, կարելի է սանձահարել թուրքերի արիւնարբու ընչաքաղց ձգտումները։

Բայց կառավարութիւնը այդ չէ անում. նա կեղծ է. նա առերես բարեկամ է ձեւանում, իսկ ետեւից ծիծաղում է մեզ վրայ ու փորում, յայնացնում մեր դերեզմանը . . .

Ի՞նչու համար—Աստուած գիտէ. չաշխատինք մանել նրա սրտի մէջ եւ գուշակել նրա «խորհրդոց խորին»—դա յամենայն դէպս անօգուտ է այն ամենից յետոյ, որ արին հայ պատգամաւորութիւնները՝ բացատրելով կովկասեան իշխանութեան բարձրագոյն ներկայացուցչին, որ հայերը ոչ սեպարատիստ են եւ ոչ յեղափոխական։ Արձանագրենք եւ ընդունենք, իբրեւ փաստ, իբրեւ անհերքելի իրողութիւն, որ մի վիթխարի ինտրիգա վճռել է հայերին զոհ բերել մի հսկայական թիւրիմացութեան, ինչ անուն էլ որ կրելու լինի այդ թիւրիմացութիւնը։

Իր կորստաբեր սխալը կառավարութիւնը կը հասկնայ այն ժամանակ, երբ նա ընդունակ կը լինի որ եւ է բան հասկնալու, երբ կովկասեան իշխանութիւնը՝ հիմնովին կերպարանափոխուած կը սկսէ թափել Կովկասի աւերակները եւ հաշի ու համարի առնել պետութեան շահերի կործանումը մեր երկրում . . .

Միայն այն ժամանակ, միայն այն կառավարութիւնը կը գնահատէ հային եւ անկեղծօրէն ողբալով նրա կորուստները՝ կարդ, օրէնք եւ ապահովութիւն կը վերահաստատէ նրա համար։

Բայց դա ուշ կը լինի . . . այդ ցանկալի օրը կարող է լուսանալ մեզ համար, գուցէ տարիներից յետոյ միայն, երբ նա այլեւս ոչ մի արժէք չի ունենայ մեր աչքում։ Խօսքը այսօրուայ մասին է։ Իրողութիւնն այն է, որ այսօրվայ կառավարութեան զօրքերի աչքի առաջ քաղաքներում, գիւղերում, ճանապարհներին, այրում եւ կողոպտում են մեր գոյքը եւ մեզ անխնայ մորթում ու գնդակահար անում . . .

Եթէ կամենում էք՝ ժամին դիմեցէք կառավարութեան, պահանջեցէք զօրք, օգնութիւն, պաշտպանութիւն. ջրի մէջ խեղդվողը ձեռքը փրփուրին էլ էր գցում, բայց երբէք մի մոռանաք որ, դա լոկ փրփուր է, երբէք մի մոռանաք, որ կառավարութեան վերաբերմունքը ներկայ կոտորածների ժամանակ բացարձակ թշնամական է դէպի հայերը եւ բարեկամական—դէպի թուրքերը։

Ահա այն եզրակացութիւններից մէկը, որ անհամար փաստեր վերջին տասն ամսվայ իրականութիւնից հրամայողաբար թելադրում են մեզ անել . . . Այս եզրակացութիւնը անշուշտ նոր չէ։ Շատ շատերը վաղուց եկել են նոյն համոզման։ բայց բանն այդ չէ, այլ այն. որ ամենքս, առանց բացառութեան, գիւղ, քաղաք դաւանենք նոյն համոզմունքը, նոյն եզրակացութիւնը, իբրեւ անհերքելի փաստերով ապացուցված, որպէսզի մի անգամ ընդ միշտ սրտերից հանենք եւ դէն շպրտենք խաբուսիկ յոյսերը . . . . Նրանք միայն կը թուլացնեն մեր եռանդն ու ոյժերը։ Նրանք կորստաբեր են եւ մահու չափ վտանգաւոր։

—

Հապա ու՞մ դիմել, ինչ անել, ի՞նչ միջոցներ ձեռք առնել ազատվելու համար այն դժոխքից, որ ստեղծել են մեզ համար թուրքական կոտորածները։ Կրկի՞ն հաշտութեան ձեռք մեկնել, խաղաղարար ժարմիններ կազմել, համաժողովներ հրաւիրել։—Թէկուզ լինեն նրանք համակովկասեան,— կրկին ճաշկերոյթներ տալ, համբուրվել, երդվել, քաջ իմանալով, որ այդ ամենը մեր կողմից անկեղծ, թուրքերի կողմից լոկ միայն կատակ է, լոկ դաւաճանութիւն ժամանակ վաստակելու եւ նորանոր կոտորածներ նախապատրաստելու համար։

Եւ ապա. դուք հաւատո՞ւմ էք այն գեղեցիկ էֆքիթներին, որոնց քարոզիչներն ասում են, թէ թուրքահայկական ընդհարումների առաջն առնելու համար հարկաւոր է դիմել երկու ազգութիւնների աշխատող դասերին եւ բացատրել ու հասկացնել նրանց, թէ շահերը մէկ են, թէ նրանք պէտք է կռուեն ոչ թէ իրար, այլ իրանց ընդհանուր թշնամու դէմ։ Սիրո՛ւն, բայց աւա՜ղ, ուշ, շատ ուշ իրագործելի երազներ . . . Թուրքի վայրենի հակումներն եւ աւազակային ախորժակն այնքան զրգռված են հիմա, որ նա միմիայն մի բան կը հասկնայ—ոյժ . . . աւել ոչինչ։

Եւ ահա երկրորդ եզրակացութիւնը ոչ մասնաժողով, ոչ համաժողով, ո՛չ հացկերոյթ, ո՛չ համբոյր, այլ ոյժ, միմիայն ոյժ։ Երբ մենք բաւականաչափ ուժեղ կը լինենք, երբ ամեն մի յարձակում, երբ եւ ուր էլ որ լինի, յետ կը մղվի ջախջախիչ հարուածներով, այն ժամանակ միայն թուրքը կը հանգստանայ եւ կը դառնայ մեր նախկին խաղաղ հարեւանը ու գուցէ աւելի խաղաղ հարեւան, քան եղել է առաջ. երկար տարիների ընթացքում, երբ, այսուամենայնիւ, մենք քիչ չէինք տուժում նրա հարեւանութիւնից։

—

Ոյժ . . . ահա նա, որին պէտք է դիմել վտանգի ժամին, խնդրել, աղերսել, որ «չուտափոյթ օգնութիւն» հասցնէ, պաշտպանէ, զօրք ուղարկէ. ի հարկէ, ոչ օտար զօրք. որի սուրը շատ հեշտութեամբ դառնում է օգնութիւն խնդրողի դէմ եւ որ շատ անգամ լոկ հանդիսատես է մեր կորստեան «թամաշային»։ Ոյժ սեփական, որ կանխօրէն այնտեղ է, ուր նախագուշակվում է վտանգ, ոյժ, որ հասնում է առանց օգնութեան աղերսի եւ որ կուում է ոչ յուսահատաբար. այլ առաջուց համոզված լինելով որ անշուշտ տանելու է յաղթանակը։

Այո, բայց որտեղից գտնել այդչափ եւ այդպիսի ոյժ,—կասէք դուք—հարցի ամբողջ էութիւնը հէնց դրա մէջ է։

Անշուշտ սա է ամենից գլխաւորը. սա է, որ պէտք է վճռէ մեր կեանքի եւ մահվան հարցը։ ։

Ուրեմն որոնենք այդ ոյժը, տեսնենք որտեղ է թաղված նա եւ ինչու մինչեւ հիմայ երեւան չէ գալիս ու չէ կարողանում այնպիսի դիմադրութիւն ցոյց տալ թուրքերին, որ ներանք մի անգամ ընդ միշտ մոռանան իրանց յարձակումները։

Բայց նախ ասացէք, ո՞րտեղից են վերցնում թուրքերն իրանց ոյժը,—արդեօք թո՞ով շատ են մեզանից. նիւթակա՞ն ոյժ շատ ունեն, թէ մտաւոր։

Նիւթական եւ մտաւոր ոյժերի մասին չարժի խօսել, որովհետեւ, կարծում եմ, ամենքս էլ համաձայն ենք, որ այդ կողմից մեր ոյժերը անպայման գերակշիռ են։ Մնում է ֆիզիքական ոյժը—թուական գերազանցութիւնը։ Բարեբաղդաբար դա եւս թուրքերու կողմը չէ։

Դուք զարմանու՞մ էք. բայց ահա փաստերը։ Անգրկովկասում բոլոր հայերի թիւը, համաձայն Նորագոյն վիճակագրութեան—1,118,000 է, իսկ մահմեդականներինը՝ 2,253,000։

Հանեցէք այս վերջին թիից սիւնիների թիւը— 1,379,213, որոնք չեն մասնակցում չիմների յայտարարած սրբազան պատերազմին մեր դէմ, եւ դուք կստանաք մի թիւ, 874,222, որ ամենեւին շատ չէ հայերի թիից։

Ի՞նչու ուրեմն, մենք լինելով մանաւորապէս եւ նիւթապէս թուրքերից բարձր, իսկ քանակութեամբ ոչ պակաս նրանցից, չենք կարողանում ամէն տեղ եւ ամէն ժամանակ՝ նրանց յարձակումների դէմ հանել այնպիսի պաշտպանողական ոյժ, որի խրատը լինի նոյնքան տեւական, որքան ապ-

բելու աշխարհիս վրայ Թուրք ցեղի ներկայ աւազակային սերունդը։

Քա՞ջ են նրանք մեզանից. երկչոտ եւ Թուլասիրտ է հայը,—Ո՛չ, ո՛չ այդ կաղաղակէ ամեն մի հայ, որին վիճակել է օրհասական կուի բռնվել Թուրքի հետ եւ համոզվել որ աւազակը չէ կարող քաջ լինել, նա միայն կարող է հաւարձակ եւ նոյն իսկ յանդուգն լինել այնտեղ, ուր դիմադրութիւնը Թոյլ է եւ ուր բացակայում է մահուան երկիւղը, բայց քաջ—ոչ երբէք։ Եւ ի՞նչը պէտք է ոգեւորէ աւազակին. չէ որ կեանքը ամենի համար աւելի թանգ է, քան գոյքը։ Օ,— են համոզուած եմ, պարծենկոտութեան համար չէ, որ ամէն մի հայ արհամարանքով է նայում Թուրքի քաջութեան վրայ եւ սակաւաթիւ խմբերով աներկիւղ դուրս է գալիս Թուրքական բազմաթիւ հրոսակների դէմ,—Պաշտպանել իր կեանքը, իր կնոջը, իր աղջկան, իր օջաղը, իր ցեղը, իր սրբութիւնները—ահա ինչն է ոգեւորում հային եւ այժ տալիս նրա բազուկներին օրհասական կուի մէջ։ Ո՞վ կը տայ նրան անվեհեր դիմադրութեան այն Թափը որ արտայայտել կարող է միայն նա ում գլխի վրայ սուր է կախվում...

Հապա ի՞նչու.—կասէք դուք,—եթէ այդ այդպէս է, մենք անհամար զոհեր ենք տալիս եւ նիւթապէս հակայական վնասներ կրում ի՞նչու քանդվեցին եւ կրակի մատնվեցին մեր քաղաքները, գիւղերը, աւաններները եւ աւերակները... չէ՞ որ ամէն տեղ մենք դիմադրութիւն էինք ցոյց տալիս. չէ՞ որ ամեն տեղ էլ պաշտպանվում էինք հերոսաբար. հապա ինչու Թուրքը չէ խրատվում եւ յետ չէ կենում իր յարձակումներից։

—Նրա համար, կասեմ ես, որ ամեն տեղ բացի Երեւանից եւ նրա նահանգի մի երկու գաւառից, մեր դիմադրութիւնը Թէեւ հերոսական, բայց եղել է Թոյլ, անյաջող. նրա համար, որովհետեւ Թուրքերը դեռ եւս չեն ստացել մեզանից այնպիսի խրատներ, որ ստացան Երեւանեան նահանգում, ուր մի անգամից եւ անշուշտ ընդ միշտ նրանք դադարեցին եւ հրաժարվեցին աւազակային յարձակումներից։ Մենք ամեն տեղ, բացի Երեւանեան նահանգից եւ Թիֆլիսից, յաղթվել ենք կամ մասամբ կամ բոլորովին։ Ահա թէ ինչու։

Ահա այն ճշմարտութիւնը, որ չը պէտք է Թաղնեցնենք մեզանից եւ խոստովանենք բացարձակ. ով պարծենկոտութեամբ հակառակն է անում, նա բարեկամ չէ իր ժողովրդին։

Այս բոպէին Շուշին պաշարված է եւ մատնված սովի. Գանձակը հազիւ հազ զսպում է հազարաւոր Թուրք աւազակների եռանդը. Զաքաթալայում հայերը գերված են եւ դատապարտուած տանջանքների. գիւղերում ամենքը բոպէ առ բոպէ ըսպասում են մահուան. ամեն ճանապարհ փակված է հայի համար. նա սկսել է դրվել, փախչել իր երկրից,—Գուշակում էք, թէ ինչ զարհուրելի վերջ կարող է ունենալ այդ փախուստը... Գուշակում էք, որ այդ է Թուրքերի ձգտումն վերջնակետը. այդ է նրանց ցանկութիւնների լրումը. նրանց յարձակումների վարագուրված նպատակը։

Այո՛, մենք յաղթվել ենք։

Բայց յաղթվել ենք ոչ նրա համար, որ մենք գ նձակի եւ Բագուի նահանգներում աւելի սակաւաթիւ ենք. ոչ սակաւաթիւ լինելով էլ մենք կարող էինք յաղթել, ոչ նրա համար որ մենք աւելի քիչ զէնք ունինք եւ Թուրքերի նման տարիներ առաջ չենք նախապատրաստուած—տան ամսուայ ընթացքում մենք կարող էինք եւ զէնք բերել եւ նախապատրաստվել, այլ նրա համար, որ մեր դիմադրական ամբողջ սիստեմը մի քաոս է, մի խակ, չը մտածուած բան, հիմնուած սխալ սկզբունքի վրա։ Եւ ահա այս ճակատագրական սխալի պատճառով է, որ մենք տուժում ենք, որ մեր ժողովրդի ընդհանրութեան մէջ ունենալով եւ մտաւոր եւ նիւթական եւ ֆիզիկական ոյժ ոչ պակաս Թուրքերից, չենք կարողանում զսպել Թուրքերին եւ սառեցնել նրանց յարձակողական եռանդը։

Ինչո՞ւ։

Շատ պարզ է, որովհետեւ մենք չենք կարողանում շահագործել մեր իսկ կեանքի պաշտպանութեան համար այն անսպառ ոյժը, որ կարող է տալ մեր ժողովուրդի ամբողջութիւնը։

Թուրքը յարձակվում է մեր դէմ ազգովին, իր կազմակերպված ամբողջութեամբ, իսկ մենք դիմադրում ենք այդ ահագին ոյժին մի երկու կուսակցական կազմակերպութիւնների միջոցով... Կարծես Թուրքական կոտորածների սոսկալի աղէտը չէ վերաբերում մեզանից ամեն մէկին, կարծես Թուրքական գնդակը, որ գետին է տապալում հային Բագում կամ մի որ եւ է գիւղում Բաղա դիւղում, նա նոյն ժամանակ չէ խորտակում նաեւ ամեն մի հայի սիրտ, ուր էլ նա բաբախելիս լինի։

Եւ, ի հարկէ, որքան էլ մեծ լինեն այն ջանքերը, որ գործ են դրնում այդ կուսակցութիւնները հայ ժողովուրդին պաշտպանելու գործում որքան էլ հերոսաբար կռուելիս լինեն նրանց մարտիկները, այսուամենայնիւ նրանք չեն կարող հասնել ցանկալի նպատակին,—կուսակցութիւնները, ինչպիսի կազմակերպութիւն էլ ունենան նրանք, ով էլ որ ղեկավարում լինի նրանց—միշտ կը մնան լոկ կուսակցութիւններ եւ իրենց ասպարէզ հանած դիմադրական ոյժերով կը կազմեն միայն ժողովրդական ահագին ոյժի մը աննշան սոկոսը միայն։

Աղէտը ընդհանուր է. վտանգը չոքել է կամ հերթով չոքելու է ամեն մի հայի դրանը, ուստի ժողովրդի ինքնապաշտպանութեան վիթխարի գործը իր ձեռքը պէտք է առնի ինքը ժողովուրդը իր ընտրեալ հաւատարմատարների միջոցով եւ վտանգի դէմ պիտի հանէ իր ամբողջ ոյժն ու կարողութիւնը, իսկ կուսակցութիւնները պարտաւորաբար պէտք է յարեն նրան, որպէս որդին յարում է իր հօրն ու եղբայրներին, իր ընտանիքի ամբողջութեան, երբ ընտանեկան յարկին կործանման վտանգ է սպառնում, վտանգ, որ կարող է հաւասարապէս թաղել ամենքին փլատակների տակ։

Երբ ես հայկական շրջանում յայտնեցի այս միտքը, մի-երկու հոգի ինձ առարկեցին անտարբերութեամբ. թէ ով որ ցանկութիւն ունի նպաստելու ինքնապաշտպանութեան գործին, թող միաձայ դաշնակցականների հետ. եւ ի՞նչ կարիք կայ ինքնապաշտպանութեան նոր մարմին ստեղծելու, քանի որ հինը կայ. հարկաւոր է հինը, եղածը ուժեղացնել միայն, աւել ոչինչ...

Միամիտ առարկութիւններ։

Ասացէք. մի ամբողջ ազգ, իր բազմազան խաւերով ու դասակարգերով, իր հազար ու մի տեսակ ձգտումներով եւ տարբեր-տարբեր աշխարհայեցողութեամբ, կարո՞ղ է եւ կը ցանկա՞ միանալ մի յեղափոխական կուսակցութեան, որի գործունէութեան ծրագրի մի կէտն է կազմում միայն ինքնապաշտպանութիւնը. իսկ մի՞ւս կէտերը. չէ՞ որ այդ միւս կէտերը հաւասարապէս չեն կարող գրաւիչ լինել բոլոր հայ դասակարգերի համար՝ ուղղված լինելով նոյն իսկ նրանցից մի քանիսի դէմ։

Մի ժոռանք. նաեւ այն, որ հայ յեղափոխական կուսակցութիւնները նոր չեն։ Նրանք ունեն տասնեակ տարիների անցեալ, երբ նրանք անհամար առիթներ են ունեցել ընդհարվելու թէ հարուստ—բուրժուա եւ թէ աղքատ—գիւղացի դասակարգի հետ. մի՛ մոռանաք, որ նրանց անցեալ—չեմ ասում ներկայ ինքնապաշտպանողական—գործունէութեան գնահատութեան վերաբերութեամբ իրար հետ համաձայն չեն ոչ հարուստները, ոչ աղքատները։

Քաւ լիցի. ես այս չեմ գրում վրհատեցնելու համար մեր յեղափոխական կուսակցութիւնները, ոչ թուլացնելու նրանց եռանդը. ո՛չ. ես խոնարվում եմ պատկառանքով վերջին ամիսների նրանց մարտական գործունէութեան առաջ. այս դառն օրերում նրանց քաջարի հերոսութիւնն էր միակ սփոփանք ամեն մի հայի համար. թո՛ղ նրանք անվեհեր շարունակեն պաշտպանել հայ ժողովրդին ինչպէս սկսել են. եւ այս գործում անշուշտ նրանք կարող չեն ոչ խրատի եւ ոչ քաջալերութեան, ես դրա համար չեմ գրում. ես գրում եմ որպէսզի աղաղակեմ.—

Հայ ժողովուրդ, այն ուժերը որ դու հանել ես ասպարէզ Թուրքական ընդհանուր ոդէտին դէմ գրնելու համար, քիչ են, չնչին են, բաւական չեն։

Քո հուժկու ձեռքդ առ քո ինքնապաշտպանութեան մեծ գործը։

Կազմիր քո ընտրեալների միջոցով ինքնապաշտպանութեան կովկասեան հաւահայկական միութիւն։

Կազմակերպիր քո ցրված, բայց անսպառ ոյժերդ։

Միացրու ամեն մէկին. ով հայ անուն է կրում, քու լայն գրկդ հոգոր Թեւերի տակ։

Պահանջի՛ր, ա՛ռ ով ինչ կարող է տալ—խելք, դրամ, կեանք...

Եւ ես հաւատում եմ, քեզ կը տան. կը տան. որովհետեւ ամենքն էլ քո երեսդ են նայում եւ քեզանից սպասում կեանք, ապագայ, երջանկութիւն...

Ա՛խ, եթէ ես կարողանայի հանել իմ սիրտս ու դնել ամեն մի հայի կրծքի մէջ... օ՛, անշուշտ ոչ նրա համար, որ իմ սիրտս աւելի լաւ ու ազնիւ է քան ուրիշներինը. ոչ, այլ նրա համար, որ ցաւով եւ անձկութեամբ, բաբախում ու տանջւում է միութեան համար։

Միացէք. մի՛ անէք այն ճակատագրական սխալը, որ անում էին մեր հայրերը պատմական ծանր բոպէներում՝ գործերով կուսակցաբար, բաժան-բաժան ու ցրուած ջլատուած ոյժերով։

Միացէ՛ք—այսէ միակ փրկութիւնը. միացէ՛ք կազմակերպուեցէ՛ք, հաւաքեցէք միատեղ ձեր բոլոր ոյժերը—այս է վերջին եզրակացութիւնը եւ Թուրքական անհաւոր աղէտից ազատուելու միակ միջոցը։

Ա. ՄԵԼԻԹԱՐԵԱՆ

ՄԵՐ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԻԱՐ ԶԵՐԱԶԻՆ

Տիար Զերազ դառնացած սրտով մը Լ'Ամէնին վերջ կ'ուտայ, գուցէ բարոյապէս պատժելու համար իր ցեղին ապերախտութիւնը։

Իր հոգին դառնացնող պարագաները ըստ ամենայնի զզուեցուցիչ եւ Լ'Ամէնին դադրեցուցնող պատճառները ըստ ինքեան չատ արդար, այնպէս որ իրմէն զատ ուրիշ ո՛ եւ իցէ հայ, ուրիշ կերպ չ'էր կրնար վերաբերուիլ կը կարծենք, հանդէպ նոր կալի թշնամանքի մը որուն ենթարկուեցաւ խեղճ մարդը իր վաստակաբեկ եւ խոնջած տարիքին մէջ ուր պէտք էր վարձատրուիլ գէթ պղատոնական երախտագիտութեամբ մը. այդ իսկ զրաւցուեցաւ իրեն որ զոհած էր ամեն ինչ որ ունէր իր սիրած ցեղին. կը կրնենք թէ ո՞վ որ ալ լինէր Տ. Զերազին տեղը, չը պիտի ուզէր իր հոգեկան դառնութեան մէջ, յարատեւել Լ'Ամէնին հրատարակութիւնը որ «Բրօ Ամէնիա»յի աշխարհք գալէն ի վեր կարգ մը մարդիկներու աչքին փուշ մը դարձած էր զանազան նեղ եւ գրձուձ հաշիւներով որոնց անխուսափելի հետեւանք էր Դաշնակցական Տօքթէօր Լորիս Մելիքովին ըրած այս մենամարտի հրաւէրը չափուած, ձեւուած եւ կանխատեսուած։

Տիար Զերազ, իբր զգացումի մարդ չատ բնականօրէն պիտի հրաժարէր դողդոջուն ձեռքով «Կայէնի» մը դիրը ստանձնելէ մարդու մը հանդէպ որուն անուանակիցը Կրաֆ-Լորիս Մելիքով իբր ռուս-պետական մարդ հասած մինչեւ ի դիկտատորութիւն եւ սակայն իր վերջին յուսախաբ օրերուն մէջ իր պատկանած ազգին հետեւեալ չոր խօսքը միայն գիտցաւ կտակել «Լաւ է մարդ իր ազգին հասարակ զինուորը լինել քան օտար ազգի մը իշխանը»։ Անշուշտ եթէ հիմայ ողջ լինէր հանգուցեալ Կրաֆ եւ Տիար Զերազին դերը ստանձնէր Տօք. Մելիքովի դէմ, չուտով պիտի փոխէր իր կարծիքը եւ ըսէր այսպէս «այս ազգին համար չարժեր զոհողութիւններ ընել». բայց մենք լաւ ճանչցած ըլլալով Զերազի հոգեբանութիւնը, իր երկարամեայ զոհաբերող գործունէութեամբը իրմէն երբէք չենք ակնկալեր վնասումի խօսք մը. եւ նոյն իսկ մեզ համար չատ անհասկանալի եղաւ թէ ի՞նչու Լ'«Ամէնին» դադրեցուցնելով Տիար Զերազ իբր գրչի մարդ հրաժարեցաւ գրչի մենամարտէն ալ երբ-ի բրր զգացումի մարդ մերժած էր սուրով կռուիլ. ո՞չ ապաքէն այդպիսով հնարաւորութիւն տուած եղաւ իր դաւադիրներուն որպէսզի դիւրաւ հասնին իրենց մուրաս ին։

Մեր նողկանքը դաւադիրներուն, իսկ մեր ցաւակցութիւնը Տ. Զերազին։

Արիս Գուրպէքեան

15 յունվար
Ռուսչուք

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒԽՈՒՑ, դեկտ. 3-ից, հեռագրում են Թեմիս Սրբ. առաջորդին.

Խնդրում եմ հաղորդեցէք Նորին Ս. Օծութեանը, որ Արէշի գաւառի արժ. քահանան հաղորդում է ինձ պաշտօնապէս, թէ նոյ. 29 ին զինուած Թուրքեր Գանձակի եւ Արէշի գաւառներից յարձակւում գործելով հայ Մաղուրղու գիւղի վրայ՝ անխնայօրէն աւերեցին գիւղը, կոտորեցին բնակիչներին, առեւանգեցին կանանց եւ աղջկանց։ Մօտակայ Գեաւազի, Բհանդակ, Խանիբաղ գիւղերի բնակիչներն ազատուեցին փախուստ տալով Ղայարաչլի գիւղը, որին նոյնպէս վտանգ է սպառնում. խիստ տագնապալից եւ վտանգաւոր դրութեան մէջ են գտնւում Էրմէնիբազար եւ Նեմիտապատ գիւղերը։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն՝ փրկելու համար գիւղերի եւ պաշարուածների կեանքը։

Նուխու Առաջն. ԵՂԻՇԷ Վ.

* *

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Գաւառի Ջահուկ գիւղից եկողները պատմում են, որ, Նոյեմբերի 29-ին, Ջահկի Թուրքերը յարձակուել են հայերի վրայ եւ պարտութիւն են կրել։ Հայերին օգնութիւն է հասել զօրքը։ Թէ որքան զոհեր կան, յայտնի չէ։ Ջահկում եւս Թուրքերէն Թռուցիկներ են բռնուած։

* *

ԲԱԳՈՒԻՑ եկողները պատմում են, որ անցեալ շաբ. օրն այնտեղ մի Թուրք մի ուրիշ Թուրքի վրայ ատրճանակ է արձակում, որից մեծ իրարանցում է ընկնում։ Այնուհետեւ տեղի ունեցած հրացանաձգութեան ժամանակ սպանւում է 15 Թուրք եւ մի հայ ապայ։ Զօրքը դուրս է գալիս եւ խաղաղութիւնը վերականգնում է։ Թուրք վաճառականների շնորհիւ զսպւում են նրանց «ջանբեզար» ների վայրագութիւնները։

* *

ԹԻՖԼԻՍ—Նոյ. 29-ին արդէն յիշել էինք, որ Թուրք խուժանը Եղիազարեանցի՝ Վորոնցովսկայա փողոցին վրայ գտնուած նոր կառուցուած կրպակները գիշերով կողոպտել եւ հրդեհել էին. այլեւ ժամը 12-ին ս Սարգսի արեւելեան ուղղութեամբ մի մեծ նոր կառուցուած տուն. Միրզաեանցի բաղնիքի գիմացը կրպակներով մի մեծ շէնք եւ Ալիբի հրապարակի արեւելեան անկիւնը՝ մի կողմից նպարավաճառների (լաւաշների) ամբողջ կրպակները, միւս կողմից յիշեալ անկիւնից սկսած հրդեհը ծաւալ ստանալով անողոքաբար լափեց առաջին ընկած կրպակները, յունաց եկեղեցու՝ նոր շինուած կրպակները, եկեղեցին եւ մի քանի շէնքեր ել յառաջ անցնելով դադարից. հրդեհաշէջները չէին կարող մօտենալ, որովհետեւ փախնում էին Թուրքերի գնդակներից։

Նոյ. 29 գիշերը Թուրք խուժանը Շէյթան փողոցի կողմից Հրեշտակապետ եկեղեցու դրսի դուռը կոտրելով ներս է մտնում գաւիթը այնտեղի տները կողոպտելուց յետոյ (բնակիչները վաղօրօք տեղափոխուել էին) ջարդում է եկեղեցու դուռը, ներս է մտնում եւ բոլոր սուրբ անօթները եւ թանկագին իրեղէնները կողոպտում, պատկերներն եւ ջահերը ջարդում ու փշրում. եւ այսպիսի աններելի սրբապղծութիւն մինչեւ անգամ Աստուծոյ տանը՝ լրբութեամբ կատարելուց յետոյ թողնում է եկեղեցին թափուր եւ աւեր եւ գնում։

ՆԱՄԱԿ ՍՕՖԻԱՅԷՆ(*)

Փաստերը կիրականացնեն

Ասկէց մի քանի օր առաջ յարգելի «Իրաւունք»ի սուղ էջերուն մէջ գրուած կար, հրապարակաւ Դաշնակցականներու կողմէ բռնի դրամ հաւաքելը։

Ընթերցողներէց շատերն էին որ կը զարմանային այս անխոհեմ եւ ապօրինի ընթացքին դէմ եւ կը ցաւէին որ 13 տարեայ յեղափոխական կուսակցութեան մը մէջ կը գտնուէին այսպիսի ինքնագլուխ անձեր որոնք դեռ բռնի դրամ հաւաքելու երազին մէջ կը գտնուէին. եւ դեռ այսպիսի . . . գոյութիւն ունի հայ տարրին մէջ. բայց դաշնակցական կիսապաշտօնական Ռազմիկ թերթը իր պաշտպանութեամբ եկաւ մի քիչ խռոված սրտերը հանդարտեցնելու Իրաւունքի գրածները սուտ հրատարակելով։

Շատ չանցաւ մէկէն շշուկ մըն էր որ ինկած էր Սօֆիայի հայ հասարակութեան մէջ. քիչ ժամանակի մէջ խնդիրը հրապարակ դրուեցաւ. շշուկի պատճառն է երեք տեղիս դաշնակցական ենթակօմիտէն իր տաքգլուխութիւնով որոշել է հանգանակութիւն ընել ի նպաստ դաշնակցական պատրաստուող գործիչներին? եւ այդ իրենց որոշման համեմատ կազմել են յանձնախումբ մը երկու անհատէ, որ հանգանակութեան սկսին Տաքգլուխ դաշն. յանձնախումբը որոշել է իր մէջ թէ ո՞րչափ դրամ կարող է տալ. այսպէսով իրենց խոշոր խոշոր գումարներ որոշել են (բայց խեղճերը մոռցել են որ կառք մը վարցնող որպէսզի հաւաքած խոշոր գումարները իր որոշուած տեղը տանի. ձգէ որ դաշնակցականներու գրպանները շատ մեծ են կարող են իրենց հաւաքած դրամները իրենց գրպաններուն մէջ ալ կրել) ժամանակ չի կորսնցնելու համար դեռ առաջին օրը կսկսին ներկայանալ ժողովուրդին եւ իրենց որոշած խոշոր գումարներ պահանջել բռնի կերպով, երբ կը տեսնեն որ շատ անխիղճ են չարժուիր գումարները խոշոր են դրել, կսկսին ժողովուրդին հետ սակարկութեան մտնել հարիւրին 40—50 զեղչելով. երբ կը տեսնեն որ այս անգամ նորէն անյաջող պիտի մնայ իրենց որոշումը, նորէն կսկսին զեղչերը վրայ դնել եւ առաջի որոշուած գումարը պահանջել. դաշն. յանձնախումբի նախագահը ի միջի այլոց ըսել թէ քանի որ այս անհատներու հետ աւուչ վարուիս այնչափ կը կծծիանան. պէտք է մեր որոշումը որոշեալ ըլլայ. պէտք է որոշուած գումարները լիովին գանձել առանց սանտիմ մը զեղչելու եթէ ոչ դաշնակցական սուրը պատեանէն դուրս պիտի գայ, վա՛յ ողորմելի վայ։

Աչքդ լոյս Սօֆիայի ժողովուրդ քանի որ դու ունիս քո մէջ ինքնագլուխ դաշնակցականներ դեռ շատ պիտի տրաքիս դաշնակցական հրամանին տակ. Կովկաս Ռուսիան, Տաճկաստան Թուրքը, Սօֆիա ալ Դաշնակցականները։

Հիմակ տեղը չէ ըսել թէ փաստերը կուգան իրականացնելու Իրաւունքի մէջ գրուածները Դաշնակցականներու բռնի դրամ հաւաքելու մասին. մեղք հազար մեղք որ Ռազմիկ ի պաշտպանութիւնը ջուրը ինկաւ։

Այս խնդիրներու մասին խօսք կուտամ Իրաւունքի խմբագիրին, որ ամէն ժամանակ փաստերով կարող ենք տեղեկութիւն տալ իրեն։

ԿԱՑՃԱԿ

(*) Այս նամակը կը հրատարակենք նոյնութեամբ, առանց շտկելու գրական սխալներն իսկ։

ԱԶԳԱՅԻՆ

Տեղւոյս Թաղ. Խորհրդոյ երկրորդ հրաւէրին 30 ի չափ ազգայիններ անձամբ պատասխանած ըլլալով, ազգային կալուածներ ձեռք բերելու ծանօթ նպատակաւ խորհրդակցութիւններ կատարուեցան և ներկաներուն մէջ համաձայնութիւն գոյանալէ վերջ, յանձնախումբ մը ընտրեցին, որ պաշտօն ունի արդէն ուրուագըծուած ծրագիրը մշակելով ներկայացնել ընդհանուր ժողովի մը։

—Շումլայէ մեզ կը գրեն հետեւեալ տխրեցուցիչ տողերը․

«. . . Եւ պէտք է ա՛լ գրուին որպէսզի բոլոր աշխարհ իմանայ թէ Շումլայի մէջ պակաս չեն դաւաճաններ. օրինակի համար ասկէ յառաջ ընտրուած Թաղականութեան ապօրինութեանն առթիւ պատրիարքարանէ չվաւերացուելուն համար՝ այդ խումբը (անունները հոս յիշուած է, բայց մենք առայժմ զանց կընենք) մինչեւ արտաքին գործոց նախարարութեան դիմելով քաղաքիս կառավարչին միջոցաւ, կուզեն որ Թաղականութիւնն կառավարութեան ձեռօք ընտրուի և անով վաւերացուի առանց ճանչնալու Պատրիարքարան։ Թէեւ ժողովուրդէն շատերը դէմ են, բայց կառավարիչը լաւ հասկնալու համար՝ այս կիրակի (15 յունվար) ինքն անձամբ Թաղ. Խորհրդարան գալով պիտի հարցնէ ժողովուրդեան թէ՝ ինչպէս կուզեն, և ատոր համեմատ պիտի գործադրէ։»

Խմբագրութիւնս վերահասու ըլլալով թէ ծանօթ յեղ. կուսակցութեան մը պատկանող մէկ քանի անձեր են այս դատապարտելի քայլին պարագլուխները, խորհուրդ պիտի տայինք այդ կուսակցութեան Պալգանեան վարիչ մարմնոյն որ փութար սանձահարել իր Շումլայի ենթակաները և կասեցնէր անոնց այդ ազգադաւ ընթացքը։

—Նոյն քաղաքէն Տիկին Տիրուհի Գ. Մանուկեան ոսկեզօծ շքեղ միւռոնաթափ աղաւնի մը նուիրած է տեղւոյն եկեղեցիին։

—Պուգրէշէն Տ. Վ. Մէշտուճեան մեզ կը հաղորդէ թէ այս յունվար ամսոյ մէջ պիտի սկսի հրատարակել ռումաներէն լեզուաւ շաբաթաթերթ մը, մեր ռումանախօս ազգայիններուն հայութիւնը ծանօթացնելու նպատակաւ։

Յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք Տ. Մէշտուճեանի որ արդէն ծանօթ է մեր ընթերցողներուն իբր հայ հրապարակագիր Գամեր-Արշաւիր ծածկանունով։

—Տիկին Տիրուհի Եաղլըգճեան որ այրիկն է Թուրք փողերանոցի նախորդ արկղակալ Պետրոս էֆէնտիի և որ այժմ Վենետիկ կը բնակի, 50,000 ֆր. նուիրեր է Հայ-Հռովմէականաց Ս. Յակոբայ հիւանդանոցին։ Նուիրատու տիկինը մինչև իր մահը այս գումարէն փոքր տոկոս մը միայն պիտի առնէ եղեր։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պատ. Խմբ. Իրաւունք լրագրոյ

Թաղական Խորհուրդս կը խնդրէ Պատ. Խմբագրութենէդ՝ իւր ազգօգուտ թերթին միջոցաւ թարգման հանդիսանալ մեր անհուն շնորհակալութեանց եւ երախտագիտական անկեղծ զգացմանց առ Գեր. Տէր Գէորք եպիս. Իւթիւճեան, որ առաքելավայել ընթացք մը ունեցած է հանդէպ մեր Նորընծայ Տէր Ներսէս Ղօնչէկիւլեանի իւր հայրական խնամոց և հոգածութեանց առարկայ ընելով իւր ձեռնասունն, մինչեւ քառասնօրեայ ապաշխարութեան լրանալը։

Շնորհակալութիւն նաև Մանչեսթըրի Պատ. Հոգաբարձութեան եւ այլ ազնիւ ազգայնոց որոնք յարգած ու մեծարած են մեր Նորընծան։

Ի Դիմաց Թաղ. Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Դաւիթ Յ. Մուրատեան
1 յունվար 1906
Տօպրիչ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

„ԻՐԱՒՈՒՆՔ“ ի Վարչութիւնը յանձն կ՚առնէ տպագրել հրաւիրագրեր, նամակագլուխներ, այլ եւ այլ քարտեր, հաշուեցուցակներ, տոմսակներ, գրքոյկներ եւ այլն.

Ուրիշ քաղաքներէ ստացուած յանձնարարութիւնք կը գործադրուին փութով եւ մեծ խնամքով։ Գիները չափաւոր եւ դրամը կանխիկ։

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Եէմէնտէն Պապը Մէրասքէրին ալտըղը հավատիսլէր Արապիստանըն ահվալընը աղըր կէօսթէրիյօրլար ։ Մուշիր Ֆէյզի բաշա Ումրանտան կէրի տէօնմէյէ մէճպուր օլարագ, կէլուպ Սանաայա անճագ կիրէպիլտի․ ֆագաթ Սանաա տախի Պէտէվի արապ դապիլէսինտէն ․իհաթէ օլընտը ։ Շիմտի Ֆէյզի բաշա եէնի իմտատ խօթէմէքտէ տիր ։

—Սէրպիա վէ Պուլկարիա պէյնինտէ կէօմրիւկ իթթիհատը (միացում) իլան օլընմասը Եըլտըզտա էնվաի գօրգուլար հասըլ իթտի, զիրա կէօմրիւկ պիրլէշմէսի բօլիթիգա իթթիհատընա տախի գլավուզ օլապիլէճէք տիր։ Պու սէպէպլէ Պապը Ալի Թարաֆընտան Սօֆիատաքի Թիւրք գօմիսէրի պուլկար հիւքիւմէթինէ պիր նօթա Թագտիմի իլէ սըրպ-պուլկար կէօմրիւկ իթթիհատը Պապը Ալիի Թասաճուպտա պըրագտըղընը վէ Պէրլին ահտընամէսի Պուլկարիայա օ եօլտա հագլար վէրմէտիկինի պէյան իտուպ իդզահաթ իսթէտի ։

Պուլկար հիւքիւմէթի պու եօլտա պիր նօթայա ճէվապ վէրմէք միւնասիպ կէօրմէյուպ սիւքիւնէթլէ իշինէ տէվամ իթմէքտէ վէ Սէրպիա տախի Աւստըրիայա գարշը ճէսարէթ վէրմէքտէ տիր ։

—Եունան էլչիսի Սատրազամա միւրաճաաթլէ, Սէլանիքտէ Րումլարըն խանէ վէ տիւքեանլարը եօգլանըլմասը վէ տէրտէսթ իտիլմէլէրինէ գարշը բրօթէսթ իթտի, վէ գօնսօլօսլարըն հուզուրը չարթ օլտըղընը իխթար էյլէտի ։

ՏԱԽԻԼԻ

Պուլկար—Սըրպ կէօմրիւկ իթթիհատընտան նաշի Սօֆիատաքի Թիճարէթ օտասը մէճլիսի վիւքէլայա Թէշէքքիւրաթ պէյան իթտի․ քէզա սըրպ Թիւճճարլարընա Թէվէտճուհաթ վէ մէվատտէթ պէյան իթմէք իչիւն 22 Թիւճար Պէլկրատա կիտէյօրլար։

—Սըրպ գօմիթա րէյիսլէրինտէն տէօրտ զաթլարըն Սօֆիայա կէլմիշ օլտըգլարընը վէ Մաքէտօնիատա պուլկար գօմիթալարը իլէ միւթթէֆիգէն իշլէմէք իչիւն միւշավէրէ էյլէտիքլէրի Սօֆիատան «Աժանս Րումէն»է պիլտիրիլմիշ տըր ։

—Ջինկեանէ ճէմիյէթի նամը իլէ պիր գօմիսիօն Պուլկարիա դաաալարընը տօլաշմագտա օլուպ, Ֆիլիպէ—Պուրկազ Թարիգի իլէ պու կիւնլէրտէ չէհրիմիզէ տախի կէլմէսի Բուզնուդա կիտէճէք իմիշ ։

—Պուլկար վաբօր չիրքէթի պիր եէնի վաբօր տահա սըբարիշ վէրէճէք տիր․ պու եէնի վաբօր «Բիրիլ» Թեսմիյէ օլընաճագ ։

—Եսնաֆ գանունընամէսինէ գարշը չըրագ, գալֆա վէ ամէլէ օլանլար վէ էքսէրիսի ուսթալար տախի բրօթէսթ իթմիշ օլտըգլարը կիպի, բազար կիւնիւ չէհրիմիզտէ Թէքրար պէօյիւկ պիր միթինկ իտուպ մէզքիւր գանունըն լաղվընը իսթէյէ իթտիլէր ։

ՌՈՒՍԻԱ

Աֆղանիստան սինօրընա եագըն Ռուսիանըն Սէյթան էյալէթինտէ եումուրճագ խասթալըղը պաշ կէօսթէրմիշ տիր ։ Քէզա Աֆղանիստանտա տախի եումուրճագ սիյարէթ իմմիշ ։

—Վլատիվօստօքտա պահրիյէ ասքէրլէրի տէբօլարա հիւճում իտուպ, Թիւֆէնկ վէ մուհիմմաթ գալտըրմըշլար վէ սօնրա մահպուսլարըն սէրպէսթ պըրագըլմասընը Թալէպ իթմիշլէր իսէ տէ, գարա ասքէրի Թօբ խսթիմալի իլէ իթաաթսըզ պահրիյէ ասքէրլէրինի տաղըթմըշ տըր ։

—Րիկատա պիր պէօյիւկ ասքէր սօգագտան կէզէր իքէն էվլէրտէն ոթէշէ Թութուլտըլար։ Ասքէր իխթիլալճըլարըն սըղընմըշ օլտըղը մէզքիւր 3 էվլէրէ հիւճումլէ 13 քիշի տէրտէսթ իթտի վէ քիւլլիյէթլի սիլահ էլէ կէչիրտի ։

—Քէզա տիկէր պիր Թէլէկրաֆ խպրէ, Րիկատա պէօյիւկ պիր սիլահ ֆապրիգասը պուլընմըշ տըր ։

—Լիօնիտէ բսեանը Թէսքին իչիւն էլէ ալընան չէտիտ Թէտպիրլէր սայէսինտէ ասըլար Թէրքի սիլահ իթմիշլէր վէ Թէշվիգճիլէրինի վէ րէյիսլէրինի Թէսլիմ իտէրլէր իմիշ. պունլարտան պիր չօղընը ասքէր գուրշունա տիզմիշ ։ Ասըլարըն պիր գըսմը տախի տաղլարա դաչմագտա ըմըշ ։ Ցունվար 9 տաէրքեան հարպտան մահքիւմ օլան 45 քիշիլէր գուրշունա տիզիլտիլէր ։

—Եէնի Ռուսիա Թապիր օլընան եսալէթտէ բօսթա վէ Թէլէկրաֆ իշլէմէկէ պաշլատըլար ։

—Մ․ Վիթթէ պիր միւլագաթտա տէմիշ տիր քի՝ հուկ․ 17 տէնէշր օլընան մանիֆէսթ Զարըն հուգուգը հիւքիւմրանիսինէ Թօգանմագ․ քէզա տէմիշ տիր քի՝ Ագսաի Շարգտան օրտու կէրի կէլմէսինտէ մէմալիքին իխթիլալաթընը Թէսքին իտէպիլէճէք տիր ։

Մ․ Վիթթէնին պու սէօզլէրի իխթիլալճը—անարշիսթլէր էլլէրինէ ալտաթմիթմէք խսթէյօրլարտը հալպու քի Մ․ Վիթթէ տօղրու վէ սաֆ ֆիքիրլէ սէօյլէմիշ օլուպ Սահմանադրութիւնըն իճրասընա զայրէթ իթմէքտէ տիր․ չուգտատար քի նասահաթ անլամայան վէ միւլք ու միլլէթին մէնֆաաթընը տիւշիւնմէյէն ֆիթնէլէրի ասքէր գուվէթի իլէ Թէէտիպ իտէյօր ։

ԿԱՎԿԱՍԻԱ

Թիֆլիստէն պա Թէլէկրաֆ պիլտիրիլտիկի խպրէ, Գութայիս, Բօթի վէ Պաթում չէհիրլէրի իլէ չըմէնտըֆէր մուխապէրաթը պաշլամըշ տըր․ սթասիօնլարը ասքէրլէր ասըլար էլինտէն զապթ իթմիշլէր, ասըլար իսէ ասքէրէ գարշը ճէնկլէշմէքսիզին պըրագուպ տաղլարա տաղըլմըշլար ։

— Գութաիս վիլայէթինին եէնի վալիսի ժէնէրալ Ալիխանով ասքէրիյէ Թըրէնի իլէ Քվիրիլէ եէթիշուպ կիւրճի ասը չէթալարլէ գավկայա Թութուլտու․ ասըլար Քվիրիլի եագտըլար ։ Ալիխանով եէնիտէն իմտատ գապուլ իթմիշ օլուպ Գութաիսի տէրհալ զապթ իթմէք իւմիտինտէ տիր ։

Ըսեան իթմիշ օլան իչպու Գութայիս վիլայէթի Պաթում—Թիֆլիս չըմէնտըֆէրի եօլը իւզէրինտէ չիմալ ճիհէթինտէ պուլընուպ տաղլըգ պիր գաչ գազալարտան իպարէթ տիր ։ Էհալիսի էքսէրի խրիսթիեան կիւրճիլէր օլուպ, պէյլիկ եախօտ ավթօնօմիա մուխթարիյէթ) իսթէմէքտէ տիրլէր ։ Մէզքիւր վիլայէթ 30·35 սէնէ մուգգատէմ պիր պէյլիք իտի․ էհալիսի մուհարէպէյէ եէքթա վէ եէրլէրի տաղըգ վէ գայալըգ օլտըղընտան պիր միւտէթ մուգավէմէթ իտէճէքլէր կէօրինիյօր ։

ՍՈՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Վլատիվօսթօքտա Թէքրար գարըշըգլըգ չըգմըշ վէ հէր պիր իշ եիւզ իւսթիւնէ պըրագըլմըշ օլտըղը մահէլինտէն Համպուրկա պիլտիրիլմի․ տիր ։

— Բէթէրսպուրկտան Պէրլինէ պիլտիրիլտիկի խպրէ, հարպիյէ նազըրընըն ալտըղը րաբօրթլարա պինաէն, Մանչուրիա օրտուսը պիւթիւն գարըշըգ պիր հալէ կիրմիշ․ ասքէրլէր զապիթլէրինէ իթաաթ իթմէզլէր, զապիթլէր տախի իքի Ֆըրգայա Թագսիմ օլընարագ, պիր գըսմը ճումհուրիյէթ իսթէյօր վէ տիկէրի իտարէի հազըրիյէ Թարաֆ Թութայօր ըմըշ ։

—Վիէննա 16 յունվար— Բէթէրսպուրկտան իշար օլընտըղը իւզրէ, Կավկասիատա իխթիլալ հէր Թարաֆտա եաեըլմագտա․

Գարա տէնիզ տօֆանմասը տէնիզտէն սիլահ կիրմէմէք իչիւն սահիլլէրի մուհասէրէ իտէճէք իմիշ ։

—Պէլկրատ 16 յունվար—Օնպինտէն զիյատէ Թիւճճարլար վէ ֆապրիգաճըլար պիր ⅓ միթինկ իտուպ չու գարարը վէրտիլէր․ Աւստրիանըն հագըրդ Թէքլիֆլէրինէ սըրպ հիւքիւմէթին հարէքէթի բէք միւնասիպ ։ Պուլկարիա իլէ եաբըլան կէօմրիւք իթթիհատը իքի սլաւ միլլէթլէրէ տախի ֆայտէլի տիր, ֆագաթ պու իթթիհատը Թէպտիլ իչիւն Աւստրիա իլէ միւզէքէրէ եթմէսին» վէ սաիրէ ։

☛ ԹԵԱՏՐՕ ☚

ՍԱԼԱ «ՊՈՒԼԿԱՐԻԱ»

Պիր գաչ հաֆթատան պէրու չէհրիմիզտէ պուլընան Պէնլեանըն «ՎԷՍԷԼԼՕ» նամ գօմէտիա գումբանեասը «Քէօյլիւ-Գըզը», «Ջինկեանէ-տիւկիւնիւ», «Զընկըլտաք», «Մագարնալը», նամ ալաթիւրքա Թիւլահաթլարը իլէ պիր գաչ ագշամ խաֆիֆմէշրէպլէրի էյլէնտիրտիկի կիպի, պու ագշամ տախի «Աշըգլար» նամ ույտուրմասիօնը օյնայաճագ տըր։

Մ․ Պէնլեան քէնտի ռէքէրբուարընըն Թէստէ պաշըըք օլան «Գահվէճի Վէլի Պապա» նամ մէշհուր օյունու սօնա սագլամագտա տըր․ քի՝ Վարնատան չէքիլուպ կիթմէսինտէ էհալի Վէլի պապանըն Թէէսիրի ալթընտա գալուպ, տէօրթ կէօզլէ Մ․ Պէնլեանըն ավտէթինի պէքլէսին ։

ՆՈՐ ԳԵՂՈՒՆԻՆ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Նախորդներէն աւելի ճոխ պարունակութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղունին» կը պարունակէ 100 էն աւելի գեղատիպ դասական պատկերներ. գերազանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիանալի են բազմագոյնի պատկերները ։ Պատկերազարդ թերթէ մը թէեւ չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը. սակայն խմբագրութիւնը «Գեղունիի» այս բաժնին հարկ եղած ջանքը խնայած չէ. Ներքին եւ արտաքին յօդուածագիրները ունին հետաքրքրական գրուածներ ։

Գինն է 10 ֆր. 4 րուբլի. 2 տոլար․

Դիմել
Հայկական տպարան
Ս. Ղազար Վենետիկ (ԻՏԱԼԻԱ)

Одговорникъ А. Курбетиянъ
печатница Д. Тодоровъ и С-ие—Варна